«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիր

«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի» իրականացման հիմնական նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Ծրագրով 2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կտրամադրվի ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 40-60 (ներառյալ) տոկոսի չափով սուբսիդավորում:

2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար գործակալության անդամ յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը փոխհատուցվում է նաև ապահովագրական հատուցումների այն մասը, որը գերազանցում է հավաքագրված (հաշվեգրված) ապահովագրավճարի 80 տոկոսը:

2026 թվականին կապահովագրվի

- **խաղող, ծիրան, դեղձ, ցորեն, գարի, վարսակ՝ կարկտահարություն և հրդեհ ռիսկից,**
- **խնձոր, սալոր, կարտոֆիլ, բալ, կեռաս ձմերուկ, սեխ, ցորեն, գարի, վարսակ՝ կարկտահարություն ռիսկից,**
- **խաղող, ծիրան, դեղձ, սալոր, վաղահաս կարտոֆիլ, միջին (միջին վաղահաս, միջին ուշահաս), ուշահաս կարտոֆիլ՝ գարնանային ցրտահարություն ռիսկից**
- **ցորեն, գարի, վարսակ՝ երաշտ ռիսկից,**

Ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետներին՝ ըստ ապահովագրման ռիսկերի, մշակաբույսերի և մարզերի կարող եք ծանոթանալ այստեղ:
Գյուղատնտեսության ապահովագրության սակագներին կարող եք ծանոթանալ այստեղ:
Գյուղատնտեսության ապահովագրության ապահովագրական գումարներին կարող եք ծանոթանալ այստեղ:
Համայնքների բաշխումն ըստ ռիսկային գոտիների և հարաբերականության ցուցանիշի կարող եք ծանոթանալ այստեղ:

Ծրագրից օգտվելու համար գյուղատնտեսությունում տնտեսավարողները դիմում են ապահովագրական ընկերություններից որևէ մեկին՝ Լիգա Ինշուրանս,

Սիլ ինշուրանս, Նաիրի ինշուրանս, Ռեգո ինշուրանս, Արմենիա ինշուրանս, ԷՖԵՍ ինշուրանս:

Ծրագրի մանրամասներին կարող եք ծանոթանալ այստեղ՝
ՀՀ Կառավարության 24 հոկտեմբերի 2019 թվականի N 1485-Լ որոշում
Ծրագրի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար կարող եք դիմել ապահովագրական ընկերություններին: